ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2014 թվականի N 26-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով,

համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 13-ի թիվ 6՝ արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:

3.Ջրվեժի համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 23-ի թիվ 24-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ			
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ			
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. հունիսի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2014 թվականի N 27-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Արա Սարիբեկի Գրիգորյանի սեփականությունը հանդիսացող Ջրվեժի 07-057-0341-0014 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 103,38 քառ.մ մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական համար 29052014-07-0060, տրված 2014 թվականի մայիսի 29-ին), համաձայն N 1, 2 հավելվածների, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Առաջարկել Արա Սարիբեկի Գրիգորյանին, հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը եռամսյա ժամկետում մուծելու համայնքի բյուջե:

3.Համայնքի ղեկավարին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երկրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողամասը երեք տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում՝ սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման նախագիծ,

3)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության նախարարություն և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ			
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ			
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. հունիսի 13
գ. Ջրվեժ

Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
հունիսի 13 -ի N 27 -Ա որոշման

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղական համայնքի նպատակային նշանակությունը փոփոխվող հողամասի Մ 1:5 000

Ծանոթագրություն

1. Բնակավայրի հողեր – 0,010338 հա

Հավելված N 2
ՀՀ Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
հունիսի 13-ի 27-Ա որոշման

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Արա Գրիգորյան Սարիբեկի ին Հողհատկացման հիմքը սեփականության վկայական N 29052014-07-0060
Անուն, ազգանուն

Կոտայք Ձրվեժ

Մասշտաբ 1:500



ԲԱԺԱՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

	ՀՈՂԱՄԱՍԻ	Անկյունային բնութագրիչ կետերի	Կորդինատներ Y	Կորդինատներ X	Հեռավորությունը մետր	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Հանարը՝ ըստ հողամասերի հատակագծի	Գործառական նշանակությունը (անվանումը)	Անկյունային բնութագրիչ կետերի	Կորդինատներ Y	Կորդինատներ X	Հեռավորությունը մետր
Մակերեսը քմ (հա)	0.010338հա	1	8467471.68	4450675.38	12.31							
		2	8467466.06	4450686.33	9.15							
		3	8467457.96	4450682.08	8.91							
		4	8467453.82	4450689.97	10.15							
Ծածկագիրը	07-057-0341-0014	5	8467462.81	4450694.68	21.19							
		6	8467472.65	4450675.92	1.11							
		1	8467471.68	4450675.38								
Նպատակային նշանակությունը	բնակավայրերի											
Գործառական նշանակությունը	բնակելի կառուցապատման											
Հողամասը ծանրաբեռնված է												

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2014 թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետի,

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ			
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ			
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. հունիսի 13
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ձրվեժի համայնքի
ավագանու 2014 թվականի
հունիսի 13-ի N 28-Ա որոշման

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՁՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքի բնակիչների (այսուհետև՝ բնակիչներ) մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

2. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

3. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև սույն կարգով:

4. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:

5. Գյուղապետարանի աշխատակազմը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:

6. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

7. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ բնակիչների ոչ պակաս, քան երկու տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին:

Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանում է ավագանու կանոնակարգով:

8. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է ավագանու նիստին՝ ավագանու քննարկմանը:

9. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

10. Համայնքի ղեկավարը.

1)համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքի ինտերնետային կայքը և այլ իրազեկման միջոցներ:

2)ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումների մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար:

3)կազմակերպում է տեղական ինքանակոավարմանն առընչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին:

4)համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

11. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և քննարկումներ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ս.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2014 թվականի N 29-Ա

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ 24-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով,

համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 23-ի «Հողերի կատեգորիան փոխելու մասին» թիվ 24-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 2-րդ կետում «բնակավայրի հասարակական կառուցապատման» բառերը փոխարինել «բնակավայրի խառը կառուցապատման» բառերով:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ			
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ			
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ			
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. հունիսի 13
գ. Ջրվեժ